

ՀԻՒԱՆԴ ԽՆԱՄԵԼՈՒ ԱՐՈՒԵՍՏԸ**ԲԱՂՆԻՔ ԿԱՄ ԼՈԳԱՆՔ**

ԲԱՂՆԻՔՆԵՐԸ կրնան զանազան ջերմաստիճան ունենալ:

Ամենէն հասարակ բաղնիքը զաղջ ջուրով առնուած բաղնիքն է, որ 30 կամ թէ 35 աստիճան կ'ունենայ, և որուն տեւողութիւնը պէտք է ըլլայ 15—20 վայրկեան: Այս վիճակին մէջ բաղնիքն ամօքիչ է. իսկ եթէ աւելի երկար տեւէ, վատուծիչ կը դառնայ:

Երբ որ բաղնիքին ջուրին տաքութիւնը 35 աստիճանն անցնի՝ տաք բաղնիք կը կոչուի: Ասիկա նախապէս զրգոյն է, բայց յետոյ հակառակ ազդեցութիւնը կ'ընէ, եթէ 15—20 վայրկեան և աւելի տեւէ, արեւելեան սովորութեամբ: Այսպէս է նաև պաղ բաղնիքը, որ 18 աստիճանէն վար կ'ըլլայ, և զով բաղնիքը, որ 18—25 աստիճան տաքութիւն կ'ունենայ:

Պաղ և տաք բաղնիքները բժիշկին կողմէն յանձնարարուելու են անպատճառ:

Աղի բաղնիքը կը պատրաստուի՝ լոգարանին մէջ քիլօ մը հասարակ աղ նետելով:

Աղային բաղնիքին համար 250 կրամ սօտա կը տրուի:

Օսլայի բաղնիքը պատրաստելու եղանակն հետեւեալն է. 500 կրամ օսլայ կը դնեն մեծկակ ամանի մը մէջ, և վրան կամաց կամաց պաղ ջուր կը թափեն, զօրաւոր կերպով խառնելով մէջի օսլան, յետոյ 5—6 լիտր տաք ջուր կը լեցնեն վրան և բոլորը մէկէն կը պարպեն լոգարանին մէջ:

Թէփի բաղնիքին համար 5 լիտր ջուրի մէջ մէկ-երկու քիլօ թեփ կ'եփեն, և լաթի մը մէջէն քամելով կը թափեն լոգարանին մէջ, ճմլելով լաթը:

Եմքային բաղնիքի համար 100 կրամ trisulfure de potassium կը հալեցնեն ջուրի մէջ և կը խառնեն լոգարանի լեցուն ջուրին: Այս գործողութեան համար փայտէ կամ թէ յախճապակիէ լոգարան մը կը գործածեն, վասնզի ծծումբի բաղադրութիւնը կ'ուտէ մետաղէ ամանները:

Երանանխեալ բաղնիքի համար լաթի մը մէջ պէտք եղած քանակութեամբ մանանխի կը դնեն և պաղ ջուրով կը շաղուեն. յետոյ՝ նոյն լաթով՝ լոգարանի ջուրին մէջ կը ձգեն, և վրան կը ծածկեն սաւանով մը, որպէսզի մանանխին կծու հոտը չփնտէ հիւանդին աչքերուն:

Հաւաքեց՝ Կ. Յ. ԲԱՍՄԱՋԵԱՆ